



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի, 1փ 192 71-5-10

Թիվ 17/96
„ 05 „ հունիս 2017թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ**

Հարգարժան պարոն մարզպետ՝

Ձեզ ենք նեկայացնում Արմավիրի մարզի Արմավիր գյուղական
համայնքի ղեկավարի կողմից 2017թվականի մայիս ամսվա ընդունված որոշումները
և արձակված կարգադրությունը:

Առդիր „ 4 „ թերթից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ռ. ՄԱՐԳԱՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի, 1փ 192 71-510

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«26» մայիսի 2017 թվականի N 17-Ա

ՎԱՀԵ ԳԵՂԱՄԻ ԹՈՐՈՍՅԱՆԻ՝ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ՄԻՆՉԻ 20% ԱՎԵԼ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

∴ Արմավիր գյուղական համայնքի բնակիչ՝ Վահե Գեղամի Թորոսյանի ծնված՝ 06.05.2004թվ-ն, ժառանգության իրավունքով ձեռք բերված՝ գյուղ Արմավիր 37 փողոց թիվ 40 հասցեով գտնվող 12 00 քառ/մ տնամերձ հողամասը՝ փաստացի քարտեզագրման տվյալներով կազմել է 1248 քառ/մ՝ /կադաստրային ծածկագիր 04-020-022-010/;

1200 քառ/մ տնամերձ հողամասին կից ավել օգտագործվող 48 քառ/մ հողամասը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում ;

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետով , Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և հիմք ընդունելով Վահե Գեղամի Թորոսյանի դիմումը;

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1 Ժառանգությամբ ձեռք բերված գյուղ Արմավիր 37 փողոց թիվ 40 հասցեով գտնվող 1200 քառ/մ հողամասին կից 48 քառ/մ հողամասը անհատույց սեփականության իրավունքով տրամադրել Վահե Գեղամի Թորոսյանին

2 Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Արմավիր գյուղական համայնքի ղեկավար՝

Ռ.Ֆ.Մարգարյան



2017 թվականի մայիսի 26
գ.Արմավիր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի, 1փ 19շ 71-510

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 24 » մայիսի 2017 թվականի N 16-Ա

ՏՆԱՄԵՐՉԻ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ին երբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրանց գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին » N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 20-ի «Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին » թիվ 2 որոշումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի բնակիչ՝ Վահե Գեղամի Թորոսյանին ժառանգության իրավունքով , պատկանող բնակելի տանը /ծածկագիր 04-020-0022-0010 / տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի 37 փողոցի թիվ 40.
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի մարզերի միավորված ստորաբաժանում;
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝

Ռ.Ֆ.Սարգսյան



2017 թվականի մայիսի 24
գ.Արմավիր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի, 1փ 192 71-510

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«20» մայիսի 2017 թվականի N 15-Ա

**ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 1 ՓՈՂՈՑ ՏՈՒՆ 5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԼՅԱԿԱՅԱՆԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ ՎԵՐՄԿՄԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հիմք ընդունելով Արմավիրի մարզ գյուղ Արմավիր 1 փողոց թիվ 5 հասցեով գտնվող տնամերձ հողամասի նոր սեփականատեր Հովհաննես Տոլմոյանի դիմումը՝ հեղուկ վառելիքի ժամանակավոր լցակայանի վերաշահագործման մասին դիմումը;

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, հիմք ընդունելով Արմավիրի գյուղական համայնքի ավագանու 06.09.1999 թվ-ի թիվ 9 որոշումը՝ գյուղ Արմավիր 1 փողոց թիվ 5 հասցեում գտնվող տնամերձ հողամասի նախկին սեփականատեր Աննա Կարապետյանին հողամասի վրա հեղուկ վառելիքի ժամանակավոր լցակայան տեղադրելու մասին որոշումը, ինչպես նաև Արմավիրի մարզպետի 11.05.2017 թվ-ի N01/04/1818-17 գրությունը;

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ

1. Թույլատրել գյուղ Արմավիր 1 փողոց թիվ 5 հասցեով գտնվող տնամերձ հողամասի նոր սեփականատեր՝ Հովհաննես Տոլմոյանին, շահագործել իր տնամերձ հողամասի վրա գտնվող հեղուկ վառելիքի ժամանակավոր լցակայանը՝ պահպանելով գործող քաղաքաշինական, հակահրդեհային և սանիտարական նորմերը;
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար



Ռ.Ֆ.Սարգսյան

2017 թվականի մայիսի 20
գ.Արմավի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

„15,, մայիսի 2017թ..

N 01-Ա

ԱՆԱՀԻՏ ՏԵՐ-ՀԱՐՈՒՅՈՒՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159 հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005թվականի օգոստոսի 11-ի «Ամենամյա լրացուցիչ արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկը, այդ արձակուրդի նվազագույն տևողությունը և տրամադրման կարգ սահմանելու մասին» N 1384-Ն որոշումը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի <<Արմավիրի առողջության կենտրոն>> համանքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ Անահիտ Տեր-Հարությունյանի դիմումը:

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի <<Արմավիրի առողջության կենտրոն>> համանքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ Անահիտ Տեր-Հարությունյանին տրամադրել 2017թվականի ամենամյա արձակուրդը՝ 2017թվականի մայիսի 15-ից 22օր /20 աշխատանքային և 2 լրացուցիչ օր տևողությամբ/:

2.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի <<Արմավիրի առողջության կենտրոն>> համանքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ Անահիտ Տեր-Հարությունյանին աշխատանքի մեջ համարել 2017թվականի հունիսի 14-ից:

3.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի <<Արմավիրի առողջության կենտրոն>> համանքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ Անահիտ Տեր-Հարությունյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում պարտականությունների կատարումը վերապահել՝ նույն կենտրոնի բուժքույր՝ Գայանե Մանուկյանին, իսկ ընտանեկան բժշկի պարտականությունը վերապահել՝ „Ալաշկերտի ԲԱ,, ՀՈԱԿ-ի ընտանեկան բժիշկ՝ Լուսիկ Մնացականյանին:

4.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար՝



Ո. Տ. Մարգարյան

2017թվականի մայիսի 15

Գ. Արմավիր